




ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ՔԱՐՈՋ

ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(6 հունվար 1957 թ.)

Հիսուս ծնավ խաղաղության աստվածային պատգամով, Հիսուս ապրեցավ՝ խաղաղություն և սեր քարոզելով, Հիսուս երկինք համբարձավ, մարդոց ու աշխարհին թողլով մեծ կտակը Իր խաղաղության:

Աստվածորդվույն ծնունդը նոր, կենդանի ջունչ փչեց մարդու հոգեղեն շինվածքին, լուսավորեց պայն ճշմարտության լույսով, պորացուց արդարության պրահով, գեղեցկացուց բարության հոգիով, ջերմացուց սիրո կրակով, ազնվացուց խաղաղության տենչով:

Հիսուսի ծնունդը վերածնունդն է մարդուն:

Հիսուսի ծնունդով կնքվեցավ կենաց և խաղաղության ուխտը Աստուծո և մարդու միջև:

ՔԱՐՈՋ

ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(21 ապրիլ 1957 թ.)

Այո, փոքր ենք համրանքով և աշխարհի վրա ցիրուցան, այո, ոսկի և բեհեկ քիչ ունինք, չունինք ջբեղ ապարանքներ ու հարուստ գանձարաններ, այսօր մեր Եկեղեցին արտաքնապես անշուք ըլլալ կթվի և երբեմն ներքին դժվարություններու առաջ է կանգնած, սակայն այս բոլորեն վեր, ամեն բանեղ ավելին ունինք մենք:

Մենք մեր հոգիներուն մեջ կկրենք աննվազելի պորտությունը և անկորնչելի ջնորհները Փրկչի Իջման խորհրդին և հավիտենական լույսը փառաց՝ Լուսավորչի կանթեղին, մեր սրտերուն մեջ միշտ վառ:

Մենք երբեք պիտի չմեռնինք, մենք երբեք պիտի չտկարանանք, մենք երբեք պիտի չկորսվինք, քանզի իրավ հարյավ Քրիստոս և իրավ իջավ Միածին Որդին ի դաշտն Արարատյան, և փառքին լույսով լեցուց աշխարհն Հալաւտան և պատմությունը հայոց:

Ք Ա Ր Ո Ջ

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

(6 ապրիլ 1958 թ.)

Անհունին մեջ տիեզերքին, երբ մեզը ճեղքելով, լույսի առաջին ճառագայթները շողացին ազատ, այդ պահուն ահա ուրիշ աշխարհի մը մեջ,—մարդոց աշխարհին մեջ,— մահվան և կյանքի սահմաններուն վրա, նոր լույս մը ծագեցավ: Քակվեցավ կնիքը նյութին, հյուլեին, նյութը դարձավ լույս, մեռյալը՝ կենդանի, մարմինը՝ հոգի, մեռելներեն հարյավ Քրիստոս:

Չատիկ է այսօր, սիրելի զավակներ Սեր: Հույսի տոն է այսօր, լույսի տոն է այսօր, կյանքի տոն է այսօր: Եվ գարուն է այսօր:

Ք Ա Ր Ո Ջ

ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

(14 ապրիլ 1963 թ.)

Այսօր մեր Փրկչի, Հիսուսի Քրիստոսի հարության սուրբ կիրակին է: Սուրբ կիրակին՝ մեծ հաղթության:

Այսօր մահը իր վախճանին կհասնի հարության հաղթանակով և կյանքի լույսը, գերեզմանի քարերը ճեղքելով, թռիչք կառնեն դեպի երկինք ու կճառագայթեն հորիզոնն հորիզոն, լուսավորելով աշխարհը ամբողջ և հոգիները մարդոց:

Կյանքի մշտանորոգ ուժերը, տիեզերքի անհուն ակունքներեն և մարդու ոգեկան աշխարհներեն ազատ ու առատ կհոսին այսօր, կաճին, կուռճանան, ծաղիկ կկապեն, երգեր կհյուսեն հազար ձևերով, հազար գույներով:

Այսօր արդարության արեգակը կբարձրանա մարդկային խղճի հորիզոնին առջև, ազատության դրոշը կծածանի մեր սրտերեն ներս և խաղաղության ձայնը կհնչեն աշխարհի բոլոր ճամբաներուն վրա:

Կ Ո Ն Դ Ա Կ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(1965 թ.)

Պատմականորեն պարզացած ամեն քրիստոնեական Եկեղեցի իր սուրբերով, իր դավանությամբ, իր ավանդություններով, իր գրականությամբ և իր արվեստով, ուրույն և անկրկնելի ապրող հուշարձան մըն է, կենդանի խոսք մըն է, վավերական վկայություն մըն է՝ «Վասն մեծի փառացն Աստուծոյ»:

Պետք է սրբությամբ պահել, պահպանել զանոնք ամբողջ, տէ՛խառն ու անայլալ, առանց հովտ մը իսկ ավելցնելու կամ պակսեցնելու: Պետք չէ աղքատացնել, պետք չէ տկարացնել, պետք չէ գունազերծել Քրիստոսի Եկեղեցին:

Ինչքան իրավ ավետարանական հոգի կա, ինչքան մարդկային ճշմարտություն և ինչքան ողջմտություն՝ մեր երանաշնորհ Խրիմյան Հայրիկի բուրբ ծանոթ այն պարզ ու վճիտ պատկերին մեջ, որով քրիստոնեական Եկեղեցիները կնամանցներ մեծ ծաղկեփունջի մը, ուր ամեն մեկ ծաղիկ իր ուրույն գույնը ունի, իր ուրույն երանգը և իր ուրույն բույրը, բոլորը մեկտեղված Քրիստոսի սիրո կապով:

Այսօր, եթե կա բան մը, որ մենք՝ քրիստոնյաներս և աշխարհի Եկեղեցիները պետք է իրոք փնտրենք՝ այդ Քրիստոսի սերն է:

Ք Ա Ր Ո Ջ

ՓՐԿԶԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(6 հունվար 1970 թ.)

Մենք հակված ենք հավատալու թե այդ հեղաշրջումը կատարվեցավ և կշարունակվի կատարվիլ, վասն զի Հիսուս եկավ մարդուն ըսելու՝ դու ես տիեզերքին ու կյանքին կեդրոնը, դու ես տիեզերքին ու կյանքին իմաստը, դու ես տիեզերքին ու կյանքին նպատակը:

Հիսուսի շունչով, փլան հին աստվածները և կուռքերը բոլոր, որոնք անհիշատակ ժամանակներե ի վեր՝ մարդը կպահեին բնապաշտական հավատալիքներու սարսափին ներքև, դիվային երևակայությամբ հնարված մոլորությանց խավարին մեջ, ստրկատիրական դաժան օրենքներով շղթայված:

Հիսուս եկավ ազատ արձակելու մարդը՝ բոլոր նախապաշարումներեն, բոլոր մոլորություններեն, բոլոր կապանքներեն, բոլոր շահագործումներեն:

Հիսուսով ազատ մարդը դարձավ Աստուծո որդի և ժառանգորդ երկնից արքայության, դարձավ Արարչին գործակից, աստվածային ստեղծագործությունը շարունակող ուժ երկրի վրա, իր նմաններու աշխարհին մեջ:

Ք Ա Ր Ո Ջ

ՓՐԿԶԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(11 ապրիլ 1971 թ.)

Եվ Հիսուս, մեղքի այս աշխարհին մեջ, ցմրուր ըմպելե հետո բաժակը բոլոր դառնություններու, խաջը հանվեցավ անիրավներու ձեռքով և մեռավ:

Երկինքը խավարեցավ: Հույսի աստղերը մարեցան: Արդարները լացին:

Ուշ ատեն, աշակերտները առին Մարմինը Հիսուսի և թաղեցին փորված ժայռի մը մեջ, ծածկելով այն ծանր քարով:

Հիսուսի գերեզմանը դատարկ էր:

Ոչ մեկ մահկանացու տեսավ անոր հարությունը: Միակ նյութական վկան դատարկ գերեզմանը եղավ: Բայց վկայեցին հոգիները, հոգիները Վարդապետի աշակերտներուն, հոգիները խոնարհ բավմություններուն: Վկայեցին դարերը և սերունդները բոլոր: Եվ այսօր ալ կվկայեն հավատավոր ազգեր, ժողովուրդներ, հորիզոններ հորիզոն:

Ք Ա Ր Ո Ջ

ՓՐԿԶԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹՎ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(6 հունվար 1974 թ.)

Չենք ժխտում նյութական աշխարհի ներգործումը մարդու հոգեկանի վրա: Չենք ժխտում ընկերային-տնտեսական տվյալների պայմանավորող ազդեցությունը նրա գիտակցության վրա: Սակայն ինչպես էլ ըմբռնենք մարդու հոգեկանը, և ինչ կերպ էլ բացատրենք մարդկային գիտակցության ծագումն ու զարգացումը, առարկայական ճշմարտություն է որ հոգեկան-գիտակցական՝ ինքնուրույն, ինքնավար մի իրողություն է, նոր որակ է, նոր իրականություն է, կարևոր չափով իրեն հատուկ և միայն իրեն հատուկ, ուրույն օրենքներով ղեկավարվող:

Մարդկության պատմական փորձից և մեր ապրած արդի ընկերային ու միջազգային կյանքի փորձից հաստատում ենք, թե մարդը, հոգե-բարոյական տեսակետից, հեռու է զարգացման այն մակարդակից, որին հասել են մեր օրերին նրա իմացական ուժերը:

Տիեզերքը ճանաչելու և նվաճելու ճանապարհին գտնվող մարդը, հեռու է, ավաղ, իր հոգին, իր սիրտը ուղիղ ճանաչելուց, հեռու է մանավանդ ավելի լույս սփռելուց իր ներաշխարհի մեջ, ավելի հավասարակշռություն ու ներդաշնակություն ստեղծելուց իր զգացական ու կամային արտահայտությունների մեջ: Մարդը տակավին մեծ չափով խաբխափում է իր զգացումների, իր տենչերի ու ներքին մղումների մշուշի մեջ: Հեռու է մանավանդ իր անհատական, ընկերային ու քաղաքական կյանքը բարոյական մի օրինաչափության ենթարկելուց, հակառակ վերջին մի քանի հավարամականների հերոսական ճիգերին, մարդկության մեջ բարոյական օրենքը կենսագործելու:

Ք Ա Ր Ո Ջ

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻՆ ԲԱՂԴԱԴԻ ՀԱՅՈՑ Ս. ԳՐԻԳՈՐ
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՒՄ
(3 փետրվար 1978 թ.)

Քրիստոնեական կրոնքը միայն Աստուծո և մարդու միջև հարաբերությունն մը չէ, ուխտ մը չէ, այլ նաև կյանքի փիլիսոփայություն մըն է, ապրելու կերպ մըն է, նոր հարաբերություն ստեղծելն է մարդկանց միջև ելկրի վրա: Պողոս առաքյալ և մյուս առաքյալները միշտ կհիշեցնեն մեզի, որ մեր կյանքը վարենք քրիստոնեավայել կերպով, այսինքն Քրիստոսի Ավետարանի պատգամները պահպանենք մեր անհատական, մեր ընտանեկան, մեր հասարակական կյանքի մեջ: Քրիստոնեական առաքինություններեն՝ բարոյությունը, մարդասիրությունը, կարեկցությունը, եղբայրսիրությունը, գթասրտությունը, արդարամտությունը, ճշմարտասիրությունը, ազատասիրությունը: Այս բոլորը պարզապես վերացական գաղափարներ չեն, այլ մեր ժողովուրդը զանոնք ապրած ու կիրառած է իր պատմության ընթացքին: Մեր ամբողջ պատմությունը, մեր մշակույթը իր բոլոր դրսևորումներով ուրիշ բան չէ եթե ոչ արգասիքը քրիստոնեական այս առաքինություններուն:

Ք Ա Ր Ո Ջ

ՓՐԿԶԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(26 մարտ 1978 թ.)

Ուրեմն, սիրելի հավատացյալներ, Քրիստոսի հարության հիշատակը, լոկ պատմական մի դեպքի տարեդարձը կամ տոնակատարությունը չէ, այլ միշտ նորոգվող հոգեկան մի հրաշալի ապրում, որ համակում է մարդկանց ողջ էությունը, ամեն տարի միշտ նույն ուժգնությամբ, միշտ նույն թարմությամբ, միշտ նույն ջերմությամբ: Ամեն տարի, կարծեք նոր է որ հարություն է առնում Հիսուս Իր գերեզմանից: Կարծեք մեզանից ամեն մեկի հոգու գերեզմանից է հառնում նա: Հիսուսի հարությունը այսպիսով դառնում է ամեն մեկիս հոգու վարթոնքը, ամեն մեկիս հոգու հաղթությունը մեր մարմնի կաշկանդումների դեմ, մեր մեղքերի դեմ, մահվան ուրվականի դեմ: Հիսուսի հարությունը ճանապարհն է մեր հոգիների փրկության: Հիսուսի հարությունը ստուգությունն է՝ հավիտենական կյանքի մեր անմար հույսի:

Ք Ա Ր Ո Ջ

ՓՐԿԶԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(6 հունվար 1979 թ.)

Շատ դարեր առաջ, անմոռաց մի օր, աշխարհի վրա մի լուռ գիշեր էր, խորհուրդներով լի, երբ ինչպես երբեք՝ երկինք ու երկիր ողջագուրվեցին, երբ ինչպես երբեք՝ երազ ու սպասում գրկախառնվեցին, երբ ինչպես երբեք՝ լույս բարձունքներից հնչեցին ձայներ քաղցրանուշ հրեշտակների թևերով երկնքից իջնող, որ բերում էին մեծ ավետիսը՝ մարդկային խոնարհի հուսացյալ բազմություններին՝ թե ահա ծնվում է սպասված Մեսիան, Փրկիչը օծյալ, ծնվում է Իշխանը խաղաղության, Արեգակն արդարության...:

Այսպես ահա ծնվեց Որդին Աստուծո Քրիստոս, այսպես ահա երկիր իջավ պատգամը երկնքի, ավետիսը փրկարար ու ապատարար՝ «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Ու այնուհետև հրաշք ավետիսը այդ, դարեր ու դարեր, իբրև տուրք հրավեր՝ սիրո, հաշտության ու եղբայրության՝ բաշխվեց աշխարհին, մարդկանց, ազգերին, միշտ նույն քաղցրությամբ, միշտ նույն դյութանքով, արդարության ծարավի սերունդներին բոլոր, որոնք իրենց հայացքը դեպի երկինք հառած, տքնեցին, մաքառեցին ու երազեցին միշտ՝ երկնքից իջնող պատգամները կենսագործված տեսնել:

Ողջ պատմությունը և բոլոր վեհ ու ազնիվ իրագործումները մարդկային, շաղախված են խաղաղ ու արդար մի աշխարհի լուսաշող տեսիլքով:

Ք Ա Ր Ո Ջ

ՓՐԿԶԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(6 հունվար 1981 թ.)

Խաղաղության և արդարության ավետաբերներ են եղել նաև շատ իմաստուններ ու փիլիսոփաներ, Սոկրատեսից մինչև Էմմանուել Քանդ և մինչև մեր օրերը:

Օրինակ, հաճելի է Մեզ հիշել անցյալ դարի մեծանուն փիլիսոփաներից Հերպերտ Սպենսերի հետևյալ մարգարեությունը.

«Ընկերային այլասիրական բարոյականությունը իր կատարելության պիտի հասնի աշխարհի վրա այն ժամանակ, երբ մարդիկ իրենց ամենօրյա պահանջը նկատեն՝ մտահոգությունը իրենց նմանների երջանկության»:

Մեծ բանաստեղծներ, արվեստի ու գիտության մարդիկ, տեսիլք ունեցող հեղափոխական գործիչներ, նույնպես գովերգել են ու երգել՝ խաղաղ ու արդար հարաբերությունների ստեղծում մարդկանց և ժողովուրդների միջև:

Ինչքան բարոյական վեհություն կա օրինակ՝ անցյալ դարի ֆրանսիացի բանաստեղծ Լամարտինի հետևյալ խոսքերի մեջ.

«Տկարների ապատությունը, ուժեղների փառքն է հանդիսանում»:

Եվ ինչքան հոգեշարժ է մեր նահատակ բանաստեղծ Դանիել Վարուժանի մարդասիրական տեսիլքը.

«Արևելյան կողմն աշխարհի խաղաղություն թող ըլլա....

Ոչ արյուններ. քրտինք հոսին լայն երակին մեջ ակոսին.

Ու երբ հնչե կոչնակն ամեն գյուղակի, օրհներգություն թող ըլլա»:

Խ Ո Ս Ք

ՎԻԵՆՆԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՅՈՒԹՅՈՒՆ
ԿԱՐԴԻՆԱԼ ՖՐԱՆՑ ՔՅՈՆԻԳԻՆ՝ ԻՐ ՊԱՏՎԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ
(22 ապրիլ 1981 թ., Վիեննա)

«Եւ ասաց Աստուած՝ եղիցի լոյս և եղև լոյս»:

Աստվածային արարչագործությունը սկսվեց խաղաղության արարքով: Լույսի ստեղծումը Աստուծո առաջին խաղաղարար գործը եղավ, որով քառուղ վերածվեց Կոսմոսի, այսինքն ներդաշնակության: Անձն ու խավար անսահման տարածության խառնարանը, լույսով՝ վերածվեց մի տիեզերական ներդաշնակ ու օրինաչափ դրության:

Սուրբ Գիրքը «Եղիցի լոյս»-ից սկսյալ մինչև իր վերջին շունչը, աստվածային խաղաղարար մի տնօրինություն է: Աստված Իր Որդին աշխարհ առաքեց խաղաղության պատգամով, նոր լույսով փարատելու համար քառուղ մարդկային հոգեկան աշխարհի, այնտեղ ևս ստեղծելու խաղաղ, ներդաշնակ ու օրինաչափ մի դրություն:

Հիսուս՝ լինելով արեգակ արդարության, եղավ իշխան խաղաղության:

Հիսուս եղավ մի նոր «Եղիցի լոյս» մարդկային հոգեկան տիեզերքի մեջ, նույն աստվածային արարչագործ տնօրինությամբ:

Իբրև քրիստոնյա մի Եկեղեցու առաջին սպասավոր, խոսելով խաղաղության մասին, Մենք բնականաբար հավատում ենք թե այն իրագործելի է մանավանդ Հիսուսի Ավետարանի և բարոյական սկզբունքների ներգործությամբ: Հավատում ենք թե այդ է միակ ուղիղ ճանապարհը բարեշրջելու մարդկային հոգեկան աշխարհը, պոկելով այնտեղից թունավոր արմատները եսականություն մղումների: Հավատում ենք, այո, թե հնարավոր կլինի տակավ իրականացնել ցանկալի բարեշրջումը մարդկանց գիտակցության, համաշխարհային չափերով դաստիարակչական աշխատանք ծավալելով բոլոր ազգերի ծոցում, հիմնական նպատակ ունենալով ամեն մարդու ներշնչել նրա իրավունքը խաղաղ ապրելու և պարտականությունը պաշտպանելու իր նմանների խաղաղ ապրելու իրավունքը: